# ԾԱՂԻԿ

## ՀԱՆԴԷՍ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Ա· ՏԱՐԻ Ա· ՀԱՏՈՐ· **1861** ԹԻՒ 10· ՀՈԿՏԵՄԲԵՐ 1·

Հրատարակի ամէն ամսոյ 1 ին, 10 ին եւ 20 ին.

Յաստրագրութեան տեղին է· Իզմիր, Վասդուբական Ընկերութեան Թանգարանը Դաշտը փոցոցը· Թիւ 25 եւ Հանդէսիս գրասենեակը. Կիրիր խան· Թիւ 1·

Պօշիս Մեծ նոր խանը Ընթերցասիրաց Թանգարանը Թիւ 6·

Փարիզ, Ա· Մուրատեան· Rue du Dragon, 26

Հանդիսիս շրջանը ցեց ամիս է.

Իզմիր· գին . . . . . 40

Պօշիս եւ ուրիշ քաղաքներ . . . 50

Յաստրագրութիւնները Յունիս 1 էն կ'սկսին.

Դուրս երթալիք թերթերուն ճամբու ծախքը առնցին ջրայ է.

Հանդէսիս ցերթերեցաց որ եւ իցէ նամակ խմբագրաց դիտի ուղղուի·


Հետեւեալ նկատուելու արժանի հմառօտ նամակը մեզ խրկուած է Սահմանադրասէր և Ազգասէր Ճշմարիտ Հայու մը կողմանէ, զոր կը հրատարակեմք սիրով. և ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրեմք անոր վրայ։

Հալէպ 16—28 Մէպտէմբեր 1861

Ազնիւ խմբագիրք,

Տասն և հինգ տարիէն մինչև խնկելի Սահմանադրութեան ծնած օրը՝ Հալէպու ԻՆՐԱՆԱԿՈՍ առաջնորդ Գ· Նիկողայոս եպիսկոպոսին կերպ առ կերպ ԱՆՆԵՐԵՆԻ ընթացքներուն վերաբերեալ՝ Կ· Պոլսոյ Ազգային նախնի վարչութեան ուղղուած բազմահամար իրաւացի գանգատանաց՝ յայտնի և անյայտնի հակառակ տնտեսութիւնին թէպէտև վերջին աշխարհածանօթ խայտառակութեամբը պակուեցաւ. բայց մեզ ալ մինչև ցարդ քիչ ազդօգուտ ձեռնարկութիւններէ չարգիլեց։ Պատկառելի նախնի վարչութենէն փոխանակ սպեղանւոյ՝ թոյն, և փոխանակ ձուկի՝ օձ ընդունողը մինակ մենք զմեզ կարծելով քիչ արտում չէինք. ո՜հ, որքան մխիթարուեցանք որ ժամանակ "Երկու խօսք" յայտարարութեան շնորհիւ՝ ընթերցանք 1840 Օգոստոս 28 թուով սուրբ Երուսաղէմայ ակնառոր միաբանութեան նամակը, որ և ծանօթ է մեզ 1850 ին տեղի ունեցած վնասալի գործադրութիւնը, որ բոլորովին հակառակ էր ակնածելի Միաբանից մատուցած աղերսին։ Այս է որ մեզ կատարեալ կը մխիթարէ և կը համոզէ թէ՝ նախնի վարչութեան մի հատիկ օրէնքն է եղեր՝ որ և իցէ իրաւացի գանգատանաց հակառակը տընօրինել և ազդամնասը պատուել։ Մեր առաջնորդական խնդիրը որ այլև այլ արդելքներով դեռ երեսի վրայ կը կենայ 'ի վնաս մեր ազգաշահ բաղձանաց, չտար երկինք և չտեսնան ցանկացողք՝ եթէ դժբաղդաբար պաշտելի Սահմանադրութիւնը իւր օրօրոցին մէջ թմրի, և դարձեալ ազգային վարչութեան սանձը նախնի կառավարչայ ձեռքը անցնի, որով ան ատենը հարկ պիտի ըլլայ Ճշմարիտ դիմադրութեան, որ ազգօգուտը ստայուի։

Այս նախապատրաստութիւնը, որուն դիմելու զուցէ տարաբաղդութիւնը զմեզ ստիպէ, ազնիւ և ազգասէր Տէր Թ· Մ· Տ· Աստուածատուրեան Միհրդատեանցի խուզարկութեան արդիւնքը ըլլալով (որ վերոյիշեալ յայտարարութեան Ճշմարտասէր հեղինակն է) խորին շնորհակալութեամբ Ներիայցի Հայքս երախտապարտութիւններս կանխիկ կը խոստանիմք, սէ թէ սուրբ Երուսաղէմայ խնդրոյն համար՝ այլ սոսկ անոր համար որ մեզ մեծ մտատանջութենէ մը ազատեց և նախապատրաստութիւն մը ընելու առիթ եղաւ մեզի՝ որ յուսալի է թէ ապառնի խաղաղութիւններս իւրեան պիտի պարտաւորինք։

Կ'աղաչեմ, ովՃշմարտասէր խմբագիր տեարք, հաճեցէք անուշահոտ Ծաղիկնուդ առաջիկայ փունջովը մեր այս իրաւացի շնորհակալութիւնը հրապա-

բակաւ նորին աղնուութեան հաղորդելով փոքրիկ թիւննիս պատուել։

Ուրեմն մնամք անթառամ Ծաղիկնուդ յարատեւութեանը բարեմաղթու Սահմանադրասէր ոմն Հանդիսիդ բաժանորդ։

---

Ընկերամասիրութիւնը մեր՝ վրայ պարտք կը դնէ անփոփոխ հրատարակելու հետագայ յօդուածը, զոր ուղղած է մեզ արդդ բարեկամ մը։

Ը. Հայս Օմուռնիոյ։

Ա.

1860. Դեկտեմբերի վերջը Իզմիրի Հայ մթնոլորտին մէջ տեղի ունեցած փոթորիկը մօտերս է որ խաղաղեցաւ. հիմա որ երկինքը կապոյտ ու պարզ է, քանի մը խօսք ըսելու պարտաւորած ենք (թէ ներելի է) այնպիսի ցաւալի խնդրոյ մը վրայ, որ հինցաւ՝ բայց չմոքրուեցաւ։

Բ.

Գրեթէ տարի մ'է որ կղզիացեալ և անդորձ է մեր հրապարակախօս գրիչը իւր ազգակից պարբնկերներէ. այս յանկարծական փոփոխութեան մասնաւոր պատճառ՝ բարեկամութեան ձեռօք նետուած նէտի մը մեր ազգայուն սրտին վրայ զոյացուցած անիրաւ հարուածին ցաւն եղաւ . . . . . ։ Անդրանիկ Միութեան յետին կոյծը՝ ձեր աչաց հպարտութեան պսակ մը երեցուց, իւր ամենայն զարդարանքներովը պաճուճեալ . . . ։

Պսակակիրն էր խնկարկուած արձան մը, Կեպրովթ . . . ։

Կոյծին լոյսը կարող չեղաւ ձեր տեսութեան ստուգել տալու թէ երևցուցածը անրջական էր կամ իրական, քանզի Վ-ԵՐՈՎԲԷ մը չի կար պտակին ժապաւէնէն կախուած։ Բայց արդ Իրաւանց և Արդարութեան անեւոյթ բերանները կը բացուին և անհիւթ լեզուներ անփոփոխութեան զօրութեամբ կը խօսին։ Ինչ չեմ խօսողը։

"Արձան անուանած էր այն՝ որ դլխիբաց խառները, շուկաները, պէղէսթէնները անձրևներով ու յեղեռներով քալեց, պտրտեցաւ հինգ դահեկան խնդրելու յօդուա ազգին և'ի նպաստ ընկերութեան։

Իւր կամքը պաշտել տուողն էր որ երբեմն ծառայի պաշտօն վարեց անձնանուիրութեամբ։

Ընդամենցոյը հետ ունեցած չափազանց մտերմութենէ մղուած՝ իւր նամակները պարզ կը գրէ ան ու յանցաւոր կը սեպուի։

Ժողովրդեան մէջ տարածուած ձայն մը "թէ ան" զՀաշտեանս կործանել կ'սպառնայ" իբր ըստոյգ կընդունուի իւր բարեկամներէ, որոնց խիղճը չի դրդեր զայն վաւերայնելու։

Խնկարկուածներուն ստորագրութիւնը հաղիւ ուրեք կը տեսնուին, Ստուածային անձանց պէս, իսկ անոր ստորագրութիւնը աւագի նման ցանուեցաւ, Հաշտեանց կնիքին հրամանաւ։

Գ.

Բայց,

Ընդհանրութեան, սիրոյ, և եղբայրութեան անուշութիւնները զիս կը թմբրեցնեն, զգայութիւնս յափշտակելով զիս կատիպին ներելու։

Կրկ վայրկենին մարդս իւր իշխանը չէ, լեզուին վանկերը կը թոչին, գրիչը կը սահի, զեղջի կայծակը անոնց եռեւէն կուգայ կը հասնի սրտին ու "ոհ սխալեցայ" կըսէ։ Սխալեցայ նաև ես յօդուածի մը հրատարակման մասին, որուն համար ներումն կը խնդրենք։ Ընկերածաբար կը խօսիմ թէ չեմ ուզեր այս նիւթը շարունակել այնպիսի անձանց դէմ, որոնք բարեկամներս էին և են։

Մարդութեան օրէնքները կը պահանջեն որ ներենք իրարու։

Երդ հրապարակաւ կուտամ բարեկամութեան ձեռքը ու սիրոյ համբոյրը անոնց։

Դ.

Այս մէկ տարուան միջոցին մէջ մեր վրայօք զանազան խօսքեր պտրտեցան քաղաքիս Հայ մթնոլորտին մէջ իբր փոքրիկ ամպեր. այս ամպերուն ուրկէ ծագիլը և ուր անհետանալը դաղտնի է. միայն թէ երբեմն կը լսուի. "Դ. Կ. սպառնացեր է, դաղտնի գործակից է եղեր, ան եռապետական է, ան ազատական է, անտարբեր է" և այլն և այլն։ Զարմանալի խօսքեր . . . ։

Մեր ինչ դրութեան տէր ըլլալը շատ դիւրին բան է իմանալ, գրած և հրատարակած յօդուածներնիս քննելով։ Մենք երբէք պաշտօնիս չենք այրեր ու այրածնիս չենք պաշտեր, ինչ որ ըսինք, նորէն կրսենք ու ամենեին մեր ստորագրութիւնը չենք եղծեր։ Եթէ չեղոք կենամք, այն մեր ազատ կամքն է ու մաքուր խղճիս . . . . . ։

Բարոյական ոգեբիլիսոփայութիւն (spiritualisme) (1) մեզ կը սորվեցնէ որ ազատութիւնը ա-

(1) Իր հակառակն է նիւթափիլիսոփայութիւն (materialisme)։

մեն առաւօտ արեգական ոսկեհուռ ճառագայթիցը հետ թաղաւորի և տնանկի հաւասարապէս կը բաժնուի Ընարչին հրամանաւ. արդ որ մահկանացուն կրնայ ուրիշ մահկանացուի մը սաստել թէ, լո՛ կամ խօսէ։ Ստուած մեր մէջ հրամայող մը դրած է, և այն է խղճին ու պատիւին միացեալ ձայնը, որուն հնազանդիլ հարկէ։

Այս է ահա մեր կրած ու կրելիք դրօշին առածը (maxime)։ Գիտցիք միայն թէ նիւթապաշտ չեմ, ու ամբերու կայծակէն առաւել՝ խղճի կայծակէն կ'երկնչիմ . . . . ։

Ն.

Այս օրուանէ կ'սկսի մեր մուտքը Հայ ասպարէզին մէջ։

Գ. Կոստանդեան։

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Vérité, beau fleuve,
Que rien ne tarit!
Source où tout s'abreuve!
Tige oú tout fleurit!
Lampe que Dieu pose
Près de toute cause!
Clarté que la chose
Envoie à l'esprit!

V. Hugo.

Ճշմարտութենէ ընտիր բան մը չկայ, ճշմարտութիւնն է միայն սիրելի, ըսաւ հանճարեղն Պուալօ։ Այո՛, ճշմարտութենէ սիրելի բան չկայ, և մարդս պարտաւոր է իր ամէն դործքերուն, խօսքերուն և ամէն կերպ պարագայից մէջ հանապազ զայն 'ի դործ դնել միայն, պատուել ու մեծարել. բոլոր ուժով և զօրութեամբ պաշտպանել, նախատանքի և կշտամբանաց յանձնառու ըլլալ։ Ի՛նչ քաջը պարտաւորութիւն, ի՛նչ փառք ու պատիւ, երբ մէկը ճշմարտութեան մը համար կը նախատուի. երբ բամբասանքի ներքև կը դնէ իր անձը, և ազատաբար զայն կը խօսի և կը յայտնէ արիութեամբ։ Ա՛պրի՛ այն քաջը, ապրի՛ այն երևելի անձը, որ իւր վերջին ճիդովը արեամբ չափ կը կռուի ճշմարտութիւնը անարատ պահելու համար, և աչք կառնու անոր համար թշնամանուիլ. փառք մըն է այն թշնամանքը, քանզի օր մը, այո՛ անպատճառ օր մը, ամենայն ինչ յայտնի ու երևան կ'ելլէ և թշնամանքը փառաց և պատուոյ սքանչելի կերպարանքը կառնու. քանզի երբէք ճշմարտութիւնը չկորսուիր և ոչնչութեան մէջ չ'անհետանար, բազմաթիւ դեղեցիկ օրինակներ ունինք առջևնիս ճշմարտութեան նահատակ ըլլողներու, որ ահագին դարերէ ետքը այսօրուան օրս անմոռաց կը փառաւորուին։

Քանիներ ճշմարտութիւն վկայելնուն և քարոզելնուն համար ոտքի տակ ընկճուած են, քանիներ անդութ չարագործներու զոհ եղած են, քանիներ չար կրից և վատ սմբարատանութեան տակ իրաւունքնին կորսնցուցած են, և մինչև այսօրուան լուսաւորեալ դարուս մէջ տակաւին կը ճնշուին, բայց հոգ չէ, ժամանակը ամէն բան յայտնեց ու կը յայտնէ, այո՛ ժամանակը ամէն դործ կը պարզէ և այն ատեն նոյն իսկ քարասիրտ յանիրաւի թշնամանողներուն կարեկցութիւնը, դութը և դովութիւնը կը շարժէ։ Աշխարհիս լուսաւորութեան հեղինակ ըլլողներուն շատերը այս դառն իրաւունց տակ անհետացած են, բայց ոչ բնաւ անուններն, որովհետև իրենց անմահ և վսեմ յիշատակովը այսօրուան օրս պարծանօք կը յիշուին։ Սակայն ինչու թշուառ մարդս երբեմն այնչափ կը խստասրտի և երբէք չուզէր ճշմարտութիւնը պաշտպանել, ինչու ականջները կը խցէ և չուզեր անոր արձագանդը լսել, ինչու անփոյթ և անտարբեր կը մնայ կորակլլուխ մնացող ճշմարտութեան մը աղեխարշ հառաչանքները մտիկ ընելու, վասն զի իր խղճմտանքը սուսկալի կիրքերովը խղդուած անդգայ եղած է. իր ոխը ու վրէժը լուծելու համար ամէն բան ոտքի տակ կառնու և անդթաբար արդարութիւնը և իրաւունքը զոհել չվարանիր։ Շատ անդամ ինքը իսկ վերահասու կըլլայ թէ ըրածը անիրաւ է, բայց չուզեր իր խօսքը ետ առնուլ, չուզեր իր սխալները խոստովանիլ անպատուութիւն կարծելով, լաւ կընտրէ դեւի պէս նոյն սխալանաց մէջ թաղուած մնալ, քանթէ իբրև մարդ վրիպիլը ճանչնալ, 'ի զուր և 'ի նանիր կը խօսիս չըլլէր, ընդ վայր կ'աղաղակես մտիկ չ'կրնար ընել, ոչինչ տեղը կ'աշխատիս հազար անդամ ուղիղ ճամբան ցուցուցանելու, խեղճը կուրցեր է և տեսնելու կարողութիւն չունի։ Եթէ խօսակցութեան մէջ ճշմարտութիւնը նիւթ մը ըլլայ. ինքն ալ կը դովէ ու կը սիրէ, բայց միայն բերանը, սիրտը ուրիշ տեղ է։ Պըզտիկ շահու և ամենափոքր փառքի համար ճշմարտութիւնը խօսելու կը դանդաղի. որովհետև եթէ բացարձակ ըսէ՝ այն ժամանակը այսինչ պարոնին

կամ այնինչ Հարուստին աչքէն պիտի ելլայ, բայց որ աւելի զարմանալին է, ոչ միայն չըխոստովանիր, այլ այն պարոնին կամ Հարուստին հետ ինքն ալ կսկսի թշնամանել և ընդ վայր հայհոյել. — Ի՛նչ օգուտ ունի անոր հետ ճշմարտութիւնը նախատելէն. — Ոչինչ, շահ կը յուսայ և շատ անգամ ինքը վրայ կուտայ, իր շահը կը մնայ ստախօսութիւն և խեղճի մը անէծքը. ահա այսպէս շատ խեղճեր տեսնուած են որ իրենց հակառակորդայ անխիղճ անիրաւութեամբը ամօթահար կը մնան և այրած սիրտով վշտաքնեալ կիջնան մինչև գերեզման։ Դամանակը կանցնի և վերջապէս ճշմարտութիւնը կիմայուի՞, և այն ատեն եթէ սիրտը քիչմը ցաւ զգայ, ես չէի կրսէ, այսինչ պարոնը մէզի այսպէս կը համոզէր ու կը հաւատայինք, — Բայց եթէ ըսեն իրեն թէ այնինչ պարոնն ալ կ'ըսէր թէ սըխալ է ըրածնիդ. — Ընոր խօսքին ականջ չը դրուիր. — Ինչո՞ւ . . . — Ինչո՞ւ կը հարցընես . . . . Զարմանալի՛ բան. եթէ այն ալ անոր չափ ստակ ունենար կամ լաւ կամ ըսելով անոր ձեռքէն ալ այնչափ դէշութիւն գալու ըլլար, և անկից վախնային, անոր ալ ականջ կը դրուէր։ Ուրեմն այսօրուան օրս զէշերուն խօսքը մտիկ պիտի ըլլալի, ի՛նչ հարկ անոնց ծուռ և Աստուածընդդէմ պատգամներուն մտադրութիւն ընելու ըստիպուիլ, ի՛նչ հարկ խղճմտանքին ազդարար ձայնին ունկնդրիլ ըլլալ որ շատ ճշմարտութիւն է, քանի մը վատթար կրկներ մեր ըլլալներուն հետևիլ։ Ա՜հ . . . բայց եթէ կամայ ակամայ գլուխդ չե՞ս ծռեր, սևին ճերմակ չէ՞ս ըսեր, իրենց ըրածը, ըսածը, գործածը գրածը, շինածը, կարածը, թափածը չե՞ս գովեր ու չե՞ս պաշտպաներ. դուն գիտես . . . այն ատեն պիտաք է աչքդ առնես, պատիւդ, հանգստութիւնդ, ստակդ, ապրուստդ, և գուցէ օր մը ալ կեանքդ . . . . : Բայց ո՜չ, ամէն մարդ սորված չէ խղճմտանքը անգլայացնել, ամէն մարդու գործք չէ լսել երբ անիրաւութիւնը յաղթող կ'ելլէ և իրաւունքը կը կորսուի, արիւնը կը դնէ նոյն ճշմարտութեան համար և առաւել լաւ կը նարէ մեռնիլ և ամէն բան աչք առնուլ քանթէ արդարութիւնը փճացընել և . . . . . :

Աղէ՛ և դուք . . . որ այսօրուան օրս անիրաւութեամբ և անարժանութեամբ ստացած փառքին և ուժին վրայ յոխալով, ձեր քոռ և չարադործ ընթացքէն զամէնքը վախցնելով, կ'ստիպուին ձեր երեսին խնդալ և շողքորթել, գիտցիք որ արդար քարկութեան նեռները պիտի տեղան օր մը ձեր վրայ։ Դադարեցէ՛ք այս ընթացքէն և մի՛ ընէք Աստուծը ձեր կրկոր գործիք, դադարեցէք ժողովուրդեան վրայ բռնանալու նպատակը գործադրելէն, դադարեցէ՛ք, և թողուցէ՛ք որ Աստուծը աղատարար առնուի քայլը Սահմանադրութեան մէջ։ Գիտցէ՛ք նաև որ օրմը այդ փառքը, ոյժը ոչուիրուած ըլլալով արդարութեան բողոքը պիտի ըլլայ և հոգենուազ մարդարէին խօսքը ձեր վրայ ալ փարձուած, թէ "Տէսի զամբարիշտն վերաձեալ բարձրացեալ իբրև ըղմայրոն Լիբանանու, անցի և ահա ոչ էր, խնդրեցի և ոչ գտաւ տեղի նորա"։

Յ-ԻԲ Գ. Մարի-Եան.

---

## ԽՆՃՈՅԹ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱՍԻՐԱԿԱՆ

Վասպուրական սիրայօդ խումբը որուն մինչև ցարդ ըրած Ազգասիրական ձեռնարկութիւնները և իրենց նուիրական նպատակց համար ունեցած եռանդնին և ջանասիրութիւնները Օմիւնիայի ողջամիտ և Սահմանադրասէր Հայոց զմայլում պատճառած է, Սեպտեմբերի 10 երրորդ գիշերը 'ի կենդանութիւն Ազգային Սահմանադրութեան, և 'ի յաջողութիւն Սահմանադրասիրաց՝ փառաւոր խնճոյք մը ըրաւ՝ իւր ջանասիրութեամբը և ճշմարիտ Ազգասիրաց նպաստիւքը հաստատած նորաշէն թատրոնին սրահին մէջ, ուր մասնաւորապէս հրաւիրուեցան Սահմանադրասէր Խաչիկեան Մանուկ Աղան, Սահմանադրասիրաց և ամէն Ազգասիրաց ծանօթ և սիրելի երիտասարդն Եղիազար Աղայն Մ. Մելիքեան, և Օրդէկի խմբագիրները։

Յիրաւի զմայլելի էր այս խնճոյքը և սրտառուչ, վասն զի հոս կը տեսնուէին Ազգային երիտասարդայ խումբ մը, որոնք ուսած են յարգել և պաշտպանել այն ամէն սկզբունքները որոնք իմաստասիրութեան և ճշմարտասիրութեան ծնունդն են, խումբ մը, որոնք չեն սովորած իրենց ժամանակը վատնել ոչ — Ազգասիրական զբաղմանց, խումբ մը որոնք հանգուցատիպ են թէ սրտով թէ կազմուածքով և թէ գործքով իրենց քաջասիրտ նախնեաց։ Գաւառթները կը լեցնէր Բարոս-, և Հայկազուններու շրթունքներ զանոնք կը ճաշակէին, ամէն դէմքի վրայ զուարթութիւն կը ցոլանար, և գաւառթները կը պարպուէին 'ի սէր Ազգին, 'ի սէրն և 'ի կեանս Սահմանադրութեան, Սահմանադրասիրաց՝ Արութեան, Օրդէկի, 'ի սէրն և 'ի կեանս Մանուկ Աղայի, Եղիազար Աղայի, Վասպուրական խումբին, Արութեան խմբագիրներուն, և Օրդէկի խմբագիրներուն, և այլն։

Եւ երբ այսպէս ամէն լեզու կը բարեմաղթէր

ինչ որ Ազգասիրական և Պահմանադրասիրական է, ահա Ազնիւ Երիտասարդն Մելիքեան հետեւեալ ընտիր խօսքը խօսեցաւ յանխպասարասի երբ ամեն սեղանակից ոտքի վրայ կանգնած և գինւոյ գաւաթներնին ձեռքերնին բռնած էին։

Ազնիւ Պարոնայք,

Ուրախ և զուարթ եմ այսն ժամուս, երբ ինքզինքս սեղանակից կը տեսնեմ ազնիւ և ճշմարիտ Ազգասէր սրտերու ընդունարան եղող սիրելի խմբակի մը, որ ՍԻՐՆ ու ՄԻՈՒԹԻՒՆԸ իրենց բաղկացուցիչ տարր ունենալով իբրև ՄՈՒՆԵՏԻԿ կանգնած ՕԳՈՒԿ հասակնին Ազգին բարօրութեանը նուիրելու զբաղած են, որոնց կը պարտի իւր երջանկութիւնը ապագայ սերունդը։ Ո՛հ լուսաւորութեանէ դարս, և ոչ Երեւելեան խաւարին նախապաշարմանց և սիրելի է տեսնել որ ԱՐՔԻՄԱՏՆԵՐՆ, կրթութեան ու յառաջադիմութեան ԱՐՔԳԸ Հայաստանին հորիզոնէն բարձրանալով՝ շքեղազարդած կը զարգարէ ՄԱՍԻՍԱՅ երկնագագաթ վեհ սարերը, որ բարձր 'ի գլուխ պանծալով 'ի թիկունս կոյս անգը 'ի ստորոտ կը վանէ խաւարի բարեկամ ԱՐՇԱԼՈՅՍԸ։ Սոյն Ազգային յարկին տակ գտնուած տեսնս չեմ կրնար առանց յիշատակութեան թողուլ սկզբնատատաճառ և նպաստամատոյց Ազգասիրաց սոյն վեհ արդիւնքը, ուր կը խմբին մարդիկ բարոյականի դաս առնելու, նման ՄԵՂՈՒՆԵՐՈՒՆ որոնք դառնահիւթ ծաղիկներէն մեղը կը քաղեն։

Ահա երբ զուարթարար գինւոյ գաւաթները սոյն յարկը կը հնչեցուցեն, սոյն ժամուն յիշեմք զէթ որ այսպէս կընէին երբեմն մեր նախահայրերն ալ, երբ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ գաւառի դաշտաց հայրենաբոյր մարգագետիններուն վրայ ուրախութեան բաժակները կը պարպէին։ Արդ ձեր սիրալիր հրաւիրանաց համար իմ անկեղծ շնորհակալութիւնս և սրտեռանդն զգացմանցս հաւատաիքը ձեզ նուիրելէ յետոյ եթէ ներուի ինձ, ձեր թանկագին կենաց երկարութեան բաժակ կառաջարկեմ "։

Ընդունելեցաւ իր ԽՕՍՔԸ մեծ ծափահարութեամբ և կեցցէներով, և իր առաջարկութեան համեմատ գաւաթներ հարուածուեցան և ըմպուեցան։

Ա՛հ որքան քաղցր և հեշտալի է տեսնել Սիրոյ և Միութեան իրար գրկած որոնց գլխուն վրայ հաստնաիր ՕԳՈՒԿՆԵՐԻ հիւսուած պսակ մը հրապուրէր ժրաջան Մեղուներու խումբը որ դարին պսակին վրայ, և ասանկով Մունեսիկ լինին Աշխարհիս, և իմացնեն թէ Մասիսի զաւակները դեռ գիտեն սիրել մեկզմեկ։ Ա. Հ.

# ՀԱՑԵ

## Ժ.

Հայեր, չի սիրենք մեկզմեկ։

« Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ունայն է »։
ՍՈՂՈՄՈՆ

Սերն ալ ունայնութիւն է, և ինչ հարկ ունինք անոր կամ ինչ շահ մեկզմեկ սիրելէ։ այսօր կամք, վաղը չի կամք, սիրած անձերնիս, և կամ ազգերնիս գերեզմանին մէջ մեզի ինչ երջանկութիւն պիտի մատակարարեն կամ կրնան մատակարարել, ուրեմն ինչու սիրենք մեկզմեկ, ասալ ունայնութենէ աւելի յիմարութիւն չէ՞ մի։

Հայրենասիրութիւնն ալ ունայնութիւն է։ վասն զի ինչ յիմարութիւն է երկիր մը սիրելը, միթէ ամեն երկիր մի չէ՞ մի, ամենքը լուսաւորողը մի և նոյն արևը չէ՞ մի, բնութեան ամեն տեսակ պարգևներ միթէ ամեն երկրի վրայ առ հասարակ չէ՞ն մի տեղար, ուրեմն հայրենասիրութիւնն ալ յիմարութիւն չէ՞ մի։

Ազգասիրութիւնն ալ ունայնութիւն է։ ըստ որում ինչ մեծ օգուտ կայ ազգասիրութեան մէջ, միթէ ամեն զգացմունք բարի, հաճելի և հեշտաբար արդասիք մը ունենալու չէ՞ մի, ինչու ազգասէր լինիմք, քանի որ անով շատ անգամ ինքզինքնիս կը վնասեմք, անձնական շահերնիս կը կորսընցընեմք, ժամանակնիս առանց հեշտաբար հաճոյից կ'անցնեմք, և զուցէ ազգասիրական սրտմաշուքով կեանքերնիս կը բամբասեմք, և վերջապէս ազգասիրութիւնը չէ՞ որ մարդասիրութիւնը բնաջինջ կ'ընէ, ուրեմն ազգասիրութիւնն ալ յիմարութիւն է։

Մարդասիրութիւնն ալ ունայնութիւն է, ինչու որ անով չեմք կարող անձնասիրութիւننիս յագեցնել, և պարարել զմեզ ինչպէս որ կ'ուզեմք, ինչու զուլթ, ինչու կարեկցութիւն ունենամք ուրիշներու վրայ, քանի որ սրտերնիս զգայուն լինելով անոնց թշուառութիւնը տեսնելով մը սեփական երջանկութեան մէջ դառնութիւն պիտի խառնուի, ուրեմն ասալ յիմարութիւն է։

Ընկերական յարաբերութիւններն ալ ունայնութիւն են, վասն զի անով կը բաղմապատկին վշտերնիս, հոգերնիս և թշուառութիւններնիս, ասալ յիմարութիւն է։

Կրօնքն ալ ունայնութիւն է, վասն զի ով ետ դարձաւ դերեզմանէն և պատմեց մեզ թէ հանդերձեալ կեանք մը կայ. "վասն զի մարդոց որդիներուն պատահածը՝ և անասուններուն պատահածը մէկ է. մէկը ինչպէս կը մեռնի, մէկալն ալ այնպէս կը մեռնի, և ամենուն շունչը մէկ է. և մարդը անասունէն աւելի բան մը չունի, վասն զի ամենը ունայնութիւն է", ուրեմն աս ալ յիմարութիւն է:

Ուրեմն,

Թողունք ամեն ինչ որ ունայնութիւն և յիմարութիւն է, ուտենք երկրիս պտուղները. շրջինք անտառները, ննջենք երբ որ ուզենք, և վայելեմք ամեն ինչ որ կը ծառայեն մեր բաղձանաց և զգայական յատկութեանց մինչև որ ուրիկից որ ելանք հոն դառնանք "վասն զի, ով գիտէ թէ մարդոց որդիներուն հոգիները վեր կ'ելլեն":

## ԺԸ.

Հայեր, սիրենք մէկզմէկ:

"Սիրեցեք մէկզմէկ"
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ի՛նչ քաղցր կը փայլի սէրը սա ընդարձակ տիեզերքին մէջ, և մէկը որ տեսնելու աչք ունի սիրելու դասը բնութեան մէջ կրնայ ուսանիլ. ով մարդ, վեր վերցուր աչուրներդ և զքեզ խաւարէն-ազատող լոյսին հարցուր թէ ինչո՞ւ յարատև իւր շրջանը կը կատարէ անխափան, և եթէ ականջ ունիս լսէ անոր ձայնը. "որ մարդոց որդիները ուսանին զիրար սիրել . . . . " շատ խօսքը անմիտներու համար է, ով որ ականջ ունի լսելու թող լսէ:

Սիրենք Հայե՛ր մէկզմէկ, համբուրեմք զիրար, և չի թողումք որ բնութիւնը իւր անթիւ դասերովը զմեզ յանդիմանէ . . . Ա՛հ, երբ կը բորբոքի սիրտը, հազիւ լեզուն կրնայ արտասանել, ուր կը մնայ գրիչը, որ դողդղացող ձեռքի մէջ որ կողմ, կամ ինչպէս շարժիլը չը գիտեր:

Ամեն կենդանի իւր ցեղը կը սիրէ, մարդս իւր ցեղը չի սիրէ՞ մի. ամեն կենդանի իւր սեփհական տեղը կը սիրէ և անկից չուզեր զատուիլ, մարդս իւր հայրենիքը չսիրէ՞ մի. ամեն կենդանի իւր բարերարը և տէրը կը ճանչնայ. մարդս միան ապերախտ գտնուի:

Լսելու ականջ ունեցողը թող լսէ. ամեն մանուկ իւր մօրը գրկին մէջ կը սնանի, ասանկ ալ ամեն մարդ իւր հայրենեաց մէջ. ամեն երջանկութիւն ու բարօրութիւն ընկերական կանոնաւոր յարաբերութեան մէջ կը տեսնուի, ուրեմն մեր ընկերական յարաբերութիւնը ի՞նչու կանոնաւոր չի լինի. ամեն շուն իւր պարկելու տեղը գիտէ, ինչո՞ւ Հայը իւր հանդստարանը չի ճանչնայ. ամեն էշ իւր սեփհական խոտը կ'ուտէ և կը ճանչնայ, ինչո՞ւ Հայը իւր սեփհական ստացուածքը չի ճանչնայ:

Ան որ լսելու ականջ ունի թող լսէ, ամեն խաղաղութիւն հոն կը գտնուի ուր համասեռունդ խումբ մը ժողովուրդ իրար սիրելով իրարու փոխադարձ բարիքը կը փնտռեն, և մէկզմէկու երջանկութեան համար բան մը չեն խնայեր, ուրեմն Հայերը ինչո՞ւ չի խորհին այս, ինչո՞ւ, ա՜հ, ինչո՞ւ դեռ յարատևեն ճաշակել Հայք թշուառութեան դառն և անհաճոյ բաժակը, ինչո՞ւ ամեն Հայերը մէկզմէկ չսիրեն և ինչո՞ւ սիրոյ և միութեան կամարին տակ չի հաւաքին . . . . :

Խօսէ՛ երկինք, միթէ մարդոց որդիները, այլ մանաւանդ Հայերը չի՞ պիտի սթափին, օր մը չի՞ պիտի տեսնեն իրենց անվայել ընթացքները, չի՞ պիտի ճանչնան իրենց մարդկութիւնը և չի՞ պիտի սիրեն իրենց հայրենիքը, ազգը և մէկզմէկ . . . ա՜հ, այս դժոխային ճակատագիրը սեփհական բաժիննիս է արդեօք. միթէ միշտ աշխարհիս առջև պիտի պարսաւունք, իբր անմիաբան, սիրոյ քաղցր զգայմունքներէ զուրկ մարդակերպ վայրենիներ:

Ներեցէ՛ք ինձ ազգայինք, վասն զի գրիչս կը շարժի դողդղալով, սիրոս ընկղմած տխրութեան մէջ դառողութենէս աւելի զգայողութեանս կը պլլուի և կ'սիպէ զիս աչուրներս աղիողորմ երկինք վերցնելու, և պաղատելու այն մարդասէր Աստուծոյն, որ երբեմն իւր մասնաւոր շնորհքներովը կ'երջանկացներ Հայոց ազգը . . . Հայոց ազգը որ հիմա . . . ա՜հ, ի՞նչ խօսելու կ'սկսիմ ես . . . . . :

## ԺԲ.

Ամենակարողդ երկինք, դու որ երկրիս ծովերէն, գետերէն, ձորերէն և դաշտերէն շոգիներ հաւաքելով՝ անոնք խիտ առ խիտ կը հաւաքես մթնոլորտին վրայ, և որոնք իրարու զարնելով ահարկու շէնքեր մէկ վայրկենի մէջ յերկիր տապալող լեռները ճղքող կայծակներ կը խրկես երկրիս վրայ, սա վայրկենիս օգնէ ինձ որ կարող լինիմ համառօտիւ ստորագրել այն դժնդակ և սարսրիչ տեսարանը որ երբեմն երջանիկ կոչուած Հայաստանը հիմա կը ներկայացնէ . . . . . երկիրը ամեն կողմանէ աւերակ դարձած՝ անցնող ճամբորդներուն անպատ ոտուքները կը դողցընէ, և կ'սաս-

պէ զանոնք վայրկեան մը կանգնելու և ըսելու բուերուն վայնասունը երբեմն տեղի ունեցած ե-բաժշտական ներդաշնակութեանց փոխանակ . . . . բերրի և արդիւնաւոր դաշտեր ամայի անմշակներ դարձած հանդիսական Հայու մը պրկունքները կը տոչորեն և արտասուաց հեղեղներ կը խնդրեն պա-զատելով իրենց ցամաքութիւնը և ծարաւը քիչ մը անցնելու համար։ Ա՛հ, Հայու արիւնով շաղախ-եալ երկիրներ, կը ծարաւիք դուք այդպէս, և քու որդիներդ զոնէ իրենց արտասուքը չեն ուզեր թրջել քու պրկունքներդ և անցնել քու ծարաւդ։

Հայեր, չեմ կարող երկար խօսիլ, եկէք, սիրենք մէկզմէկ, և աշխատինք մեր հայրենեաց բա-րօրութեանը համար. միա՛ յի դնեմք թշնամեաց, վասն զի անթիւ արիւնակիցներնիս ծարաւի են լու-սաւորութեան և կրթութեան, անոնց հառաչանքնե-ը թող լսելի լինին մեզ, ազգեն սրտերնուս և ժամ մը առաջ աշխատինք հաստատել ազգային Սահմանադրութիւնը որով կարող լինիմք ազգային ստացուածքները արդիւնաւոր ընելու, և Հայաստա-նի մէջ գտնուող խղճալի եղբայրներնուս ուսում կրթութիւն և արհեստներ մատակարարելու։

Հայեր, բաւ անիծուեցանք բաւ . . . բաւ Հայաստանի երկիրները անմշակ մնացին, բաւ երկ-րագործութեան պէս երկնային արհեստէ մը զըր-կուած մնացին մեր արիւնակիցները, բաւ ուսում կրթութիւն և երկրագործութիւն չունենալնուն և ինքզինքնին ապրեցնելու միջոցներէ զուրկ լինել-նուն համար բաժնուին զաւուին անոնք իրենց բը-նիկ երկիրներէն, ընտանիքներէն, բաւ դաղթեն մեր հայրենեաց զաւկները, բաւ ցիրուցան լի-նին և օտար երկիրներու մէջ, բաւ ամենանուաստ միջոցներով իրենց ապրուստը ճարելու համար կեան-քերնին վատնեն, ա՛հ, բաւ եղաւ ալ։

Ա. Հ.

---

## ԲԱՆԱԴԱՏԱԿԱՆ

### Արշալոյս Արարատեան թիւ- 658։

Հաճելի է մեզ այս անգամ Արշալոյս Արարատ-եանին 658 թուով հրատարակած հեռաւեալ Ազգա-սիրական խօսքերը մեր ընթերցողաց ներկայացը-նել . . . ։ Ա՛հ, չնպիտի լինէր որ Արշալոյսը կոչ-մասիրութեան ոգին մէկ կողմ դրած իւր լրագի-ը ճշմարտութեան և Ազգասիրութեան նուիրեր մշտ . . . ո՞րքան երջանիկ պիտի լինէինք մեք։

"Ազգասիրութիւնը՝ առանց խաղաղասիրութեան և միաբանութեան ապարդիւն և անօգուտ է։ Վասն-որոյ երկպառակեալ կուսակցութիւնները, որոյ ամենքն ալ ազգին բարւոյն և ազգին յառաջդի-մութեանը համար կաշխատին, կըսեն, պէտք է որ այս ճշմարտութիւնը աղէկ տպաւորեն իրենց մտացը մէջ։ Հետեւաբար հակառակութեան ու ատելու-թեան ազդակոծան ոգին մէկ կողմ ձգելով, փո-խադարձ զիջումներով և փոխադարձ ներողամտու-թեամբ ջնջելու է սէրը և միաբանութիւնը վերա-հաստատել ազգի մէջ։ Եւ յայնժամ միայն ամեն կերպ բարեկարգութիւնները հետզհետէ կրնան յա-ռաջ երթալ և արդիւնաւոր ըլլալ։ Բայց առանց սիրոյ և միաբանութեան և առանց խոհեմութեան դժուարին կերեւի մեզ որ ազգային որ և է բարե-կարգութիւն մի հաստատուն մնայ և ծաղկի"։

Արշալոյսը այս օգտակար և իրաւացի խորհրը-դածութիւնները հրատարակելէն յետոյ ցաւալի է մեզ ըսելը որ դարձեալ նոյն թուով և նոյն յօդ-ուածով խորամանկութեան կը դիմէ հետագայ խօս-քերով. "Այս երկու կուսակցութիւնները (Ը-սաորեալ և խա-որեալ), բազմաթիւ ստորագրու-թեամբ մէյմէկ աղերսագիր մատուցին Բարձրագոյն Դրան"։ Արարատեանի այս պարբերութիւնը կար-գայող պարզամիտ մէկը անշուշտ պիտի համոզուի որ Սահմանադրութիւնը վտանգի տակ է, ըստ ո-րում Արարատեանը չէ յայտներ որ Սահմանադրա-կանաց հաղար ստորագրութեան դէմ հաղիւ միւս մասը մէկ ստորագրութիւն հաւքած է և ան ալ պախալի խանութներէ, կամ մատնագրոշմ ստորագ-րութիւններ . . . Ճշմարտասէր, Սահմանադրա-սէր և ազգասէր խմբագրի մը խորամանկութիւն անվայել է։

Եր։ Երուսաղեմէն Ն. Ը. Կարապետ, Գ. Յ. պատկերահան Արարկերցին երկար բա-բակ, ձանձրացուցիչ մէկզմէկու հակասական խօսքե-րով յօդուած մը հրատարակած է հաստատելու համար թէ սուրբ Յակոբայ վանքի պատրիարքը անպատճառ պէտք է Երուսաղէմայ միաբանութիւնէն լինի, վասն զի Հանոնա վարդապետին պատմութեան մէջ հեռեւեալ նշումը կայ եղեր։

"Եթէ յայսմհետէ եկամուտ ոք որ 'ի սուրբ Երուսաղէմ չիցէ սնեալ, և կատարելապէս հին և նոր կտակարանաց աշակերտեալ, և զամենայն զելս և զմուտս սրբոյն Երուսաղէմայ աթոռոյն չիցէ ի-մացեալ և բազմաւ ժամանակաւ չիցէ վարժեալ յա-մենայն գործս սրբոյ Երուսաղէմի, և թէ ոք մար-դահաճութեան և անապատութեան աղտաւ եւ . . .

Զէ թէ միայն զարմանքնիս այլ և ծիծաղնիս կը շարժի այսպիսի իմաստակներու վրայ, որոնք կ'ուզեն պնդել թէ "ամեն նշումը վախնալու բան է", ինչ յիմարութիւն . . . միթէ լուսա-

ւորեալ տասնեւիններորդ դարու մէջ Հայերը ալ պիտի երկնչին կղերին սնոտի և ծիծաղական նզովքներէն, և պիտի թողուն որ Երուսաղեմայ Պատրիարքը խումբ մը տղէտ, ոչ Սահմանադրասէր, չեմ գիտեր որ կողմերէ փախստական վարդապետներէն մէկը լինի 'ի խայտառակութիւն և յանպատուութիւն ընդհանուր Ազգիս Հայոց . . . . . :

Եթէ մեր պատկերահան Բարսղեղին Սելանիկէն անցած է, դեռ չիգիտեր թէ իւր պաշտպանածը ինչ է, եթէ կըսեմ մեր Ն, Ծ. Պ. Ց, Մ, պատկերհանը Ամերիգացի Միսիոնարաց ծառայած է, դեռ չիգիտեր որ նզովք չէ այլ անէծք անգամ հարկը պահանջելու ժամանակ մէջ տեղէն կը վերնայ . . . . . Աստուածաշունչին մէջ շաբաթ օրը գործողներուն դէմ մեծ անէծքներ կան, և Տասնաբանեայ պատուիրանքներէն մին ալ շաբաթ օրը չիգործել է . . . Հիմա ինչ պիտի պատասխանէ մեր պարոնը, ամէն Քրիստոնեայ անէծքի տակ են, որովհետև աւելի յարմար, վայելուչ և օրինաւոր տեսան շաբաթը կիրակի փոխելու :

Մի թէ Աստուծոյ անէծքէն աւելի մեծ և տեւողական է կղերին նզովքը :

## Մասիոյ Աղա-նի, թէ- ՃԴ. ՃԵ :

Այսօր ձեռուընիս անցաւ Մասիոյ Աղա-նի ՃԴ և ՃԵ երրորդ թիւերը, որոնք աչքէ անցնելով ալ լաւ համոզուեցանք թէ անոր խմբագիրները ուղղակի Հայոց Ազգին և անոր լուսաւորութեանը, բարեկարգութեանը, և նորակազմ Սահմանադրութեան թշնամիներ լինելնուն յետոյ, մեծագէս փափաք մը ունին պապականութեան առաջնորդել զայն և կամ ուրիշ եկեղեցիի մը որ կը սորվեցնէ թէ կրօնաւորները Հրեշտակ Աստուծոյ են, և թէ հասարակութիւնը պէտք է առանց անոնց ուր երթալնին հարցընելու հետևիլ անոնց, վասն զի անոնք առաջնորդներ են եղեր աշխարհականաց դէպ 'ի փրկութեան երկիրը՝՝՝ : Կը խոստանամք յայտմ մասին հետևեալ Ծաղկով աւելի երկար գրելու բայց այս անգամ չեմք ուզեր անցնիլ առանց ըսելու թէ Մասիոյ Աղա-նին հիմակու հիմայ ոչ այնքան ուրիշ բաներու վրայ կրնայ խօսիլ որքան որ կատուի, մուկի, կապիկի, և կրօնաւորներու վրայ :

Լաւ թող խորհի առակախօս Մասեացը որ եթէ Հայոց Ազգը մուկ է, ինքնալ կրօնաւոր կատուն պէտք է լինի, և եթէ Քոնէր կազմելու չափ անկարող է մեր Ազգը, սոխակէն աւելի խրատատու մը ինք պարտի լինի :

## ԿԸՐԻԵՈՐ ԾԱՆՈՒՑՄԱՆԵՐ

Յարգոյ ընթերցողներնուս մատգրութիւնը, հրաւիրենք Հաշտենիոյ Ազգասէր խումբին Ս. Հանդարեան Մի-Բեան հանդիսին 2-րդ թուով հրատարակած Իզմիրի Քաղաքական Ժողովոյ կողմանէ գրուած և ստորագրուած յօդուածին :

## ՆԱԼԷՆՏԷԻ ԳԱՅՍԷՐԻ

Այս է նորատիպ տետրակի մը անունը, զոր մօտերս հրատարակած է Միւնասիի Լրագիրս անուն պատուական լրագրոյն խմբագիր Կարապետ Ազգանոսեան : Այս Հայրենասէր երիտասարդին զբրիչը յիրաւի որքան որ մինչև յարդ անթիւ օրինակներով մեր հիացման ենթակայ մի էր, բայց այս անգամ անոր Նալենտէի Գայսէրիէ անուն տետրակը, որ մեր Ազգին ներկայ դժնդակ կացութեան ծնունդ տուող դէպքերուն վրայ նշանաւոր և ճշմարիտ Ազգասիրական վառվռուն ոգւով գրուած է, մեր զմայլումը շարժեց, որով ստիպուեցանք համառօտիւ հրատարակել մեր ԾՕ-ՂԷԿ-ին միջոցաւ մեր սրբազան խորին շնորհակալութեան հաւաստիքը 'ի գիմաց բազում Ազգասիրաց :

Կը ծախուի Իզմիր Վ. Ասպուրական Ընկերութեան Թանգարանը, գին՝ 5 դահեկան :

## ԸՆԴԱՐՁԱԿ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ի ՍԻՄԷՕՆԷ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

## ՓԱՐՈՒՋ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Ամենընտիր ոճով շինուած 366 երեսներէ բաղկացեալ թուաբանութիւն մի է այս, որն որ մեր կողմանէ ամենայն զգուշութեամբ նկատուելով խիստ յարմար տեսանք զայն Ազգային ուսումնարաններու, փոխանակ Մխիթարեանց միմիայն բարձրագոյն մասց յարմար խրթնաբանական թուաբանութիւններուն. ուստի յուսալի է որ Մերազնեայք հարկ և վայելուչ եղած ընդունելութիւնը պիտի մատուցանեն այս ընտիր աշխատութեան 'ի քաջալերութիւն արդոյ հեղինակին և տպագրիչին : Գին 5 ֆրանք :

Նոյն թուաբանութեան երկրորդ հատորն ալ արդէն մամուլի տակ է :

Կը ծախուի Ըրշալոյս Բարատեանի տպարանը :

## ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԿԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Նմանապէս կը ծախուի Ըրշալուսոյ տպարանը, Գին՝ 16 ֆրանք :

## ՏՆՕՐԵՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Ը. ՀԱՅԿՈՒՆԻ ԵՒ Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

## ՕՄԻՒՈՒՆԻՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՏԵԱՆ

ՏՊԱՐԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԻՍՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆԸ